ՏԻԳՐԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

«ԵՐԿԻՐ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՅՈՒՆԻՔԻ ՊԱՏՄԱ-ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

«Երկիր և մշակույթ»-ը Ֆրանսիայում գործող հայկական բարեգործական կազմակերպություն է, որի առանցքային նպատակներից է Հայաստանի պատմա-ճարտարապետական հուշարձանների վերականգնումն ու պահպանումը: Վերջին տասնամյակում կազմակերպությունը ակտիվ գործունեություն է ծավալում նաև Սյունիքի մարզի տարբեր բնակավայրերում:

Վերականգնման և ամրակայման աշխատանքների շրջանակներում հուշարձանների տարածքում (ինչպես նաև առանձին հնավայրերում) կատարվել են պեղումներ, որոնց ընթացքում հայտնաբերվել են բազմաթիվ գտածոներ՝ նոր տեղեկություններ հաղորդելով Սյունյաց աշխարհի տարբեր դարաշրջանների պատմության ու մշակույթի վերաբերյալ:

Բանալի բառեր՝ *հուշարձան, եկեղեցի, ճարտարապետություն, մշակույթ, պեղումներ, հնագիտական իրեր, վերականգնում:*

1977 թ. ֆրանսահայ պատմաբան Գեղամ Գևոնյանի և նրա համախոհների ջանքերով ստեղծված «Երկիր և մշակույթ» բարեգործական կազմակերպության նպատակը հայկական պատմամշակութային ժառանգության պահպանումն է, դրա միջոցով ազգային գիտակցության բարձրացումը: Կազմակերպության անդրանիկ ծրագրերն իրականացվել են Պատմական Հայաստանի տարածքներում, իսկ 1989 թվականից՝ նաև ներկայիս ՀՀ տարածքում:

«Երկիր և մշակույթ» կազմակերպության հիմնական նպատակներից է նաև սփյուռքահայերին իրենց հայրենիքը ավելի ճանաչելի դարձնելը՝ կամավորական սկզբունքով նրանց մասնակից դարձնելով ընթացող ծրագրերին: Այդօրինակ նախաձեռնություններ իրականացվել են Հայաստանի տարբեր մարզերում, որոնց աշխարհագրությունը տարեցտարի ընդլայնվում է: Վերջին տասնամյակում կազմակերպությունն ակտիվ գործունեություն է ծավալում հատկապես Սյունիքի մարզում, ինչի շնորհիվ հուշարձանների ուսումնասիրման, վերականգնման և պահպանման աշխատանքներ են տարվել Գորիսի և Կապանի տարածաշրջաններում, իսկ վերջին երեք տարիներին՝ նաև Մեղրիում: Կազմակերպության նախաձեռնությամբ վերականգնված հուշարձանների զգալի մասը բնակավայրերի տարածքում առկա եկեղեցիներ են, որոնց վերաշինմամբ նպատակ է դրվում համայնքներում ակտիվացնել հոգևոր կյանքը: Ստորև ներկայացնում ենք Սյունիքի պատմա-հնագիտական հուշարձանների ուսումնասիրման և վերականգնման ոլորտում «Երկիր և մշակույթ» կազմակերպության իրականացրած ծրագրերի տարեգրությունը՝

1. 1995-1997թթ. – գյուղ Տաթև, Սբ. Մինաս եկեղեցու (1646թ.) վերանորոգման աշխատանքներ,

2. 2007-2011թթ. - Կապանի տարածաշրջան, գյուղ Եղվարդ, Սբ. Աստվածածին եկեղեցու (1700թ.) վերականգնման աշխատանքներ [1],

3. 2010-2012թթ. - Հին Գորիս, Սբ. Հռիփսիմե եկեղեցու (1776թ.) վերականգնման աշխատանքներ,

4. 2011-2012թթ. - Կապանի տարածաշրջան, գյուղ Եղվարդ, անտիկ դամբարանադաշտի (Ք.ա. II-I դդ.) պեղումներ,

5. 2013թ. - Սիսիանի տարածաշրջան, գյուղ Անգեղակոթ, հին գերեզմանոցում պահպանված վաղմիջնադարյան կոթողի չափագրման աշխատանքներ,

6. 2013-2016թթ. - Կապանի տարածաշրջան, գյուղ Շիկահող, Սբ. Ստեփանոս Նախավկա եկեղեցու (XVI դ.) վերականգնման աշխատանքներ,

7. 2012թ.-ից մինչ օրս – Կապանի տարածաշրջան, Տանձափարախի անապատի (Բեխի, Արիստակեսի անապատ, X-XVII դդ.) պեղման-մաքրման, մասնակի ամրակայման աշխատանքներ,

8. 2016-2017թթ. - Հին Գորիս, բնակելի-տնտեսական համալիրի (XVIII դ.) պեղման-ամրակայման աշխատանքներ,

9. 2016-2017թթ. – ք. Մեղրի, Սբ. Հովհաննես եկեղեցու (Մեղրու վանք, XVII դ.) պեղումներ,

10. 2017թ. - Սիսիանի տարածաշրջան, գյուղ Անգեղակոթ, Սբ. Վարդան մատուռի նախնական հետազոտման, պեղումների նախապատրաստական աշխատանքներ,

11. 2017թթ. - Կապանի տարածաշրջան, գյուղ Սրաշեն, Սբ. Հռիփսիմե (XVII դ.) եկեղեցու պեղումներ:

Ներկա հոդվածում անդրադարձ է կատարվում հիշյալ հուշարձաններից երեքին, որոնց պեղումներն առանձնակի կարևորություն ունեն Հայաստանի, և մասնավորապես Սյունիքի հնագիտական ժառանգության, պատմության և մշակույթի ուսումնասիրման համար:

ա) Եղվարդի անտիկ դամբարանադաշտի պեղումները: Սյունիքի մարզի Եղվարդ գյուղը գտնվում է մարզկենտրոն Կապանից մոտ 22 կմ հյուսիս-արևելք: Անտիկ թաղումները բացվել են գյուղից 3կմ հեռավորության վրա՝ հանդամիջյան ճանապարհին: 2011-2012թթ. կատարված պեղումների արդյունքում հայտնաբերվել են չորս կարասային և մեկ քարարկղային թաղումներ՝ ուղեկցող հարուստ նյութերով [2]: Դրանց թվում են խեցեղեն տարբեր անոթներ, աճյունասափորներ, ոսկե, արծաթե և բրոնզե զարդեր, այլ կիրառության մետաղե առարկաներ (աղ. I):

---

1 **Սիմոնյան Հ., Վասիլյան Լ., Բադալյան Հ., Նալբանդյան Ա., Ալեքսանյան Տ., Կարապետյան Հ.**, Վերականգնվում է Եղվարդի Ս. Աստվածածին եկեղեցին, Հուշարձան տարեգիրք, N 4-5, Երևան, 2008, էջ 268-311:

2 **Բադալյան Հ.**, **Նալբանդյան Ա.**, **Ալեքսանյան Տ.**, Նորահայտ դամբարանադաշտ Եղվարդում, Բանբեր հայագիտության, 2014, N 2-3, էջ 144-169:

Աղյուսակ 1: Եղվարդի անտիկ թաղումներից հայտնաբերված նյութեր՝
1-3 – բրոնզե թիակ և ապարանջաններ; 4-5 – արծաթե մանյակներ; 6-7 – ոսկե օղեր;
8 – ոսկե մատանի; 9 – արծաթե մետաղադրամ:

Հնագիտական նյութի, թաղման կառույցների և ծեսի ուսումնասիրությունը փաստում է, որ հուղարկավորումները համաժամանակյա են և թվագրվում են Ք. ա. I դարով: Թվագրության համար առավել խոսուն գտածո է կարասային թաղումից հայտնաբերված պարթև Միհրդատ II արքայի (Ք.ա. 123-88թթ.) արծաթե դրամը:

Դամբարանադաշտի ներկայիս հետազոտություններն առայժմ հնարավորություն չեն տալիս առավել հստակ խոսելու նրա սահմանների մասին: Դա պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ անտիկ թաղումները հիմնականում չունեն վերգետնյա կառուցվածքներ և արտաքին նշաններ: Այնուհանդերձ, ըստ նախնական դիտարկումների, Եղվարդի անտիկ դամբարանադաշտն ընդգրկում է մոտ 6 հա տարածք, որի սահմաններում, թաղումներից զատ հայտնաբերվել են նաև անտիկ բնակավայրի ավերակների հետքեր:

Տվյալ տարածաշրջանում հիշյալ թաղումների և ճարտարապետական մնացորդների արձանագրումը կարևոր հայտնագործումներ են Հայաստանի անտիկ հնագիտության ուսումնասիրման բնագավառում: Դրանց հետազոտումը հնարավորություն է տալիս Հայաստանի անտիկ հուշարձանների քարտեզի վրա վավերացնել նոր օբյեկտներ, ուսումնասիրության նոր օջախներ, իսկ պեղումներով ի հայտ եկած հնագիտական նյութը նոր տվյալներ է հաղորդում տվյալ ժամանակաշրջանի արհեստների զարգացվածության, արվեստի և առևտրի վերաբերյալ:

բ) Տանձափարախի անապատի պեղումները: Հանրահայտ է, որ Հայաստանի ուշմիջնադարյան ճարտարապետական կառույցների թվով և բազմազանությամբ Սյունիքը գրավում է առանձնահատուկ տեղ: Դրանցում մեծ թիվ են կազմում հատկապես եկեղեցական ճարտարապետության օրինակները: Հայկական ճարտարապետության պատմությունից հայտնի է, որ 17-րդ դարի երկրորդ կեսից որոշակի աշխուժացում է նկատվում հոգևոր կառույցների շինարարաության ոլորտում, որը կատարվում էր տարբեր ուղղություններով՝ կիսավեր դարձած եկեղեցիների, վանքային համալիրների, մենաստանների վերականգնում, նորերի կառուցում, գոյություն ունեցող եկեղեցիներին սրահների, զանգակատների և այլ շինությունների կցակառուցում[1]: Այդ գործունեության արդյունք է նաև Տանձափարախի մենաստանը (հայտնի նաև Բեխի, Արիստակեսի անապատ անուններով): Մենաստան-անապատը գտնվում է Կապանի տարածաշրջանում, Վահանավանքից 5կմ արևելք, անտառի մեջ: Ըստ Մ. Հասրաթյանի՝ հանդիսացել է Սյունիքի վաղագույն՝ թերևս 7-րդ դարի մենաստաններից մեկը[2]: Անապատը Տանձափարախ անվամբ հիշատակվում է Վահանավանքի հիմնադրման (911թ.) կապակցությամբ[3], որից պարզ է դառնում, որ 10-րդ դարասկզբին Տանձափարախն արդեն հայտնի միաբանական

1 **Հարությունյան Վ.**, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 375:

2 **Մ. Հասրաթյան**, Սյունիքի 17-18-րդ դդ. ճարտարապետական համալիրները, էջ 43:

3 Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1911, էջ 200:

ուխտ է եղել: Միջնադարում մենաստանը նշանավոր հոգևոր կենտրոն էր, որտեղ 1393թ. իր քարոզգիրքն է կազմել Գրիգոր Տաթևացու աշակերտ Մատթևոս վարդապետը[1]: Վանքային համակառույցը հիմնովին վերակառուցվել է 17-րդ դարի 20-ական թթ. Տաթևի Մեծ անապատի վանահայր Արիստակես վարդապետի կողմից[2], արդյունքում հայտնի է նաև Արիստակեսի անապատ անունով[3]:

Ներկայումս համալիրը բաղկացած է կենտրոնում գտնվող միանավ բազիլիկ եկեղեցուց և արևմուտքից կից գավթից, նրանից հարավ պահպանված սեղանատնից ու հուշարձանախումբը շրջափակող պարիսպներից, որից դուրս՝ մոտ 50մ արևելք, կա նաև մի փոքրիկ մատուռ:

2012 թվականից մինչ օրս մենաստանի տարածքում իրականացվում են պեղման, մաքրման և մասնակի ամրակայման աշխատանքներ, որի նպատակն է փրկել հուշարձանախումբը հետագա ավերումից[4]: Նախքան աշխատանքները անապատի շենքներն ամբողջովին ծածկված էին փլատակներով, հաստաբուն ծառերով և խիտ թփերով՝ կործանարար վնաս հասցնելով դրանց: Այսօր արդեն մաքրվել և ուսումնասիրվել են գլխավոր եկեղեցին, հարավային մատուռը, սեղանատունը և համակառույցի այլ շինություններ՝ ավելի տեսանելի դարձնելով հուշարձանախմբի համայնապատկերը և առանձին շինությունների մանրամասները (աղ. 2): Կարևոր են նաև պեղումների ընթացքում հայտնաբերված հնագիտական նյութերը: Դրանք աչքի չեն ընկնում իրենց քանակով և պատրաստման վարպետությամբ, ինչը միանգամայն սպասելի էր միաբանների վարած զուսպ կենցաղի պարագայում: Այնուհանդերձ, պեղումներով ի հայտ եկած գտածոները և առանձին կառուցվածքները նոր տվյալներ են հաղորդում անապատի շինարարական փուլերի, թվագրության վերաբերյալ, և ընդհանրապես՝ մենաստաններում կյանքի և կենցաղի մանրամասների մասին:

գ) Սրաշենի Սբ. Հռիփսիմե եկեղեցու պեղումները: Սրաշենը Կապանի տարածաշրջանի գյուղերից է, գտնվում է մարզկենտրոնից 27 կմ հարավ-արևելք, Շիկահող գետի աջափնյա հատվածում[5]: Գյուղի արևելյան եզրին պահպանվել է Սբ. Հռիփսիմե եկեղեցին, որը արցախյան պատերազմի ընթացքում մեծապես տուժել է հրետակոծությունից: Եկեղեցու կառուցման վերաբերյալ գրավոր վկայություններ չկան, սակայն ելնելով նրա հորինվածքային լուծումներից, այն թվագրվում է 17-րդ դարով:

---

1 **Ալիշան Ղ.**, Սիսական, Վենետիկ, 1893, էջ 280:

2 Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 253:

3 **Լիսիցյան Ս.**, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 47:

4 Դրանք նախաձեռնել և ղեկավարում է «Երկիր և մշակույթ» կազմակերպության ՀՀ մասնաճյուղի նախագահ, վերականգնող ճարտարապետ Ս. Նալբանդյանը: Աշխատանքներն իրականացվում են կամավորների միջոցով՝ ինչպես ՀՀ-ից, այնպես էլ արտերկրից: Սակայն անհրաժեշտ գործիքների, սարքերի, շինարարական նյութերի, ինչպես նաև մասնակիցների սննդի տրանսպորտային ծախսերը հոգում է կազմակերպությունը:

5 **Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ., Հայաստանի** և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, էջ 690:



Աղյուսակ 2: Բեխի անապատը (Տանձափարախ):
1- գլխավոր հատակագիծը (հեղ. Ս. Նալբանդյան); 2-4 – հին կառույցի ճարտարապետական մասերը; 5- հյուսիսային մասում բացված տնտեսական սենյակը; 6- գավիթի հարավային հատվածը; 7-8- գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատը պեղումներից առաջ և հետո:

Եկեղեցու վերականգնման աշխատանքներով պայմանավորված՝ 2017թ. հունիս-հուլիս ամիսներին հուշարձանի տարածքում կատարվել են հնագիտական ուսումնասիրություններ՝ նպատակ ունենալով բացահայտել եկեղեցու շինարարական փուլերը, թվագրությանը վերաբերող տվյալները, հստակեցնել հուշարձանին հարող պատմահնագիտական միջավայրը: Կատարված հետազոտությունների նախնական արդյունքները հնարավորություն են տալիս նշելու, որ ներկայիս եկեղեցին կառուցվել է հին եկեղեցու տեղում կամ վերակառուցվել է նախկինը: Ինչպես վերը նշեցինք, այս գործընթացը որոշակի աշխուժացում է ստանում 17-րդ դարում, ինչը տեսանելի է նաև Սրաշենի Սբ. Հռիփսիմեի օրինակով:

Պեղումների արդյունքում ամբողջությամբ բացվել է եկեղեցու ներսը, տեսանելի են խորանի, մույթերի, ավանդատների մանրամասները (աղ. 3, նկ. 1-2): Աշխատանքների ընթացքում եկեղեցուց արևմուտք բացվել է հին գերեզմանոցը՝ հիմնականում առանց շիրմաքարերի, որը գործել է մինչև 20-րդ դարասկիզբը և մեծապես տուժել խորհրդային տարիներին:

Պեղումների ամենակարևոր արդյունքներից է եկեղեցուց արևելք՝ անմիջապես պատի տակ և նրանից արևելք տարածվող քարարկղային և սալարկղային թաղումների հայտնաբերումը (աղ. 3, նկ. 3): 2017թ. կատարված աշխատանքների ընթացքում պեղվեց դրանցից միայն մեկը, որը գտնվում էր բլրալանջին և կիսով չափ ավերվել էր (աղ. 3, նկ. 4): Պեղումներով պարզվեց, որ այն վաղքրիստոնեական սալարկղային թաղում է, ինչպիսիք առկա են նաև նրան հարող տարածքում: Պեղումների և տարածքի հնագիտական զննության արդյունքները առիթ են տալիս ենթադրելու, որ եկեղեցին նախապես կառուցվել է վաղմիջնադարյան եկեղեցու տեղում, որոնց շուրջը, որպես կանոն, տարածվում էր քրիստոնեական գերեզմանոցը[1]: Հուշարձանի պեղումների ծավալները, արդյունքները և հայտնաբերված հնագիտական նյութն առայժմ հնարավորություն չեն տալիս հստակ խոսելու հնավայրի ժամանակագրական սահմանների մասին: Սակայն, արդեն իսկ վավերացված վաղմիջնադարյան դամբարանադաշտը կարևոր ձեռքբերում է Հայաստանի, և մասնավորապես՝ Սյունիքի վաղքրիստոնեական հուշարձանների ուսումնասիրության ասպարեզում:

Ամփոփելով վերոնշյալը՝ հարկ է ընդգծել, որ կատարված աշխատանքները առավել կարևոր են հատկապես միջնադարյան հուշարձանների պարագայում: Մինչ օրս Սյունիքի հարավ-արևելյան շրջանների միջնադարյան նյութական մշակույթի վերաբերյալ մեր գիտելիքները հիմնականում ստացվում են Վահանավանքի պեղումներից, մասնավոր հավաքածուների նյութերից և պատահական գտածոներից: Այդ տեսանկյունից, իրականացված պեղումները և դրանց արդյունքները չափազանց արժեքավոր են Սյունիքի հնագիտական հետազոտությունների բնագավառում:

1 **Մնացականյան Ս.**, Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Երևան, 1982, էջ 106:



Աղյուսակ 3: Սրաշենի Սբ. Հռիփսիմե եկեղեցին:
1-2- եկեղեցու տեսքը պեղումներից հետո; 3- եկեղեցու արևելյան հատվածում բացված քարարկղային թաղումները (չափագրությունը՝ Գ. Գյուլամիրյանի); 4- պեղված սալկղայիններ թաղումը (չափագրությունը՝ Գ. Գյուլամիրյանի):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893:
2. Բաղալյան Հ., Նալբանդյան Ա., Ալեքսանյան Տ., Նորահայտ դամբարանադաշտ Եղվարդում, Բանբեր հայագիտության, 2014, N 2-3:
3. Լիսիցյան Ս., Զանգեզուրի հայերը, Ե., 1969:
4. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, էջ 690:
5. Հասրաթյան Մ., Սյունիքի 17-18-րդ դդ. ճարտարապետական համալիրները, Ե., 1973:
6. Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992:

7. Մնացականյան Ս. Հայկական վաղ միջնադարյան մեմորիալ հուշարձանները, Ե., 1982

8. Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896

9. Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1911

10 Սիմոնյան Հ., Վասիլյան Լ., Բաղալյան Հ., Նալբանդյան Ա., Ալեքսանյան Տ., Կարապետյան Հ., Վերականգնվում է Եղվարդի Ս. Աստվածածին եկեղեցին, Հուշարձան տարեգիրք, N 4-5, Ե., 2008

ТИГРАН АЛЕКСАНЯН - ОРГАНИЗАЦИЯ «ЕРКИР ЕВ МШАКУЙТ» И ИЗУЧЕНИЕ ИСТОРИКО-АРХЕОЛОГИЧЕСКИХ ПАМЯТНИКОВ СЮНИК - Одной из ключевых целей благотворительной организации «Еркир ев мшакуйт» (Страна и культура), действующей во Франции, является восстановление и сохранение исторических и архитектурных памятников. Со времен независимости, по инициативе и средствам организации, аналогичные программы были реализованы в разных регионах Армении. В последнее десятилетие организация активно работает в разных населенных пунктах Сюникской области.

В рамках реставрационных работ были также проведены археологические раскопки, в ходе которых было обнаружено много артефактов, паредавая новую информацию о разных эпохах истории и культуры Сюника. Настоящая статья посвящена результатам некоторых из них, которые имеют особое значение для исследования археологического наследия Армении, и особенно Сюника.

***Ключевые слова**:* памятник, церковь, архитектура, культура, раскопки, артефакты, реставрация.

TIGRAN ALEKSANYAN - THE ORGANIZATION «LAND AND CULTURE» AND THE STUDY OF THE HISTORICAL-ARCHEOLOGICAL MONUMENTS OF SYUNIK - One of the key goals of «Land and Culture» charity organization, operating in France, is the restoration and preservation of historical and architectural monuments. Since independence, similar programs have been implemented in different regions of Armenia through the initiative and funds of the organization. In the last decade the «Land and Culture» has been active in different settlements of Syunik region.

Within the framework of the restoration doings have also been carried out archeological excavations, during which many artifacts were found, introducing new information on different eras of history and culture of Syunik. The present article is dedicated to the results of some of these, which are of particular importance for the study of the archaeological heritage of Armenia, and especially Syunik.

Key words- monument, church, architecture, culture, excavations, artifacts, restoration.